# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Վեհափառ Հայրապետի հրամանով և օրհնութեամբ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի տեսչութիւնն այսու հրաւիրում է բարեպաշտ ազգայիններին կամաւոր նուէրներով օգնութեան հասնելու ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վարդան Խաչատրեան Արովեանի հինգ անչափահաս որբերին, որոնք իրենց մօր հետ միասին մեծապէս կարօտ են հասարակաց խնամքին և օժանդակութեանը, զրկուելով իրենց ծնողից և խնամողից։

Նուէրները կարելի է ուղարկել ճեմարանիս վարչութեանը՝ հանգուցեալ Արովեանի որբերի, ազգիս անդրանիկ վիպասանի թոռների անունով մի գումար կազմելու և նրա տոկոսիքով նոցա սննդեան և դաստիարակութեան պէտքերն հոգալու համար։

Արարատ ամսագրի էջերում պարբերաբար կը հրատարակուի ի գիտութիւն հասարակութեան բոլոր օժանդակութիւնների հաշիւը նուիրատուների անուանական ցանկի հետ միասին։

Աչքի առաջ ունենալով, որ հանգուցեալ Վարդան Արովեանն երեսուն և հինգ տարի շարունակ մանկավարժական ասպարէզի մէջ եղելով, միշտ ազնիւ և բարեխիղճ պաշտօնեայ է եղել թէ զանազան ծխական ուսումնարաններում և թէ 1876 թուից մինչև օրս շարունակ Հոգևոր Ճեմարանում և Երևանի թեմական դպրանոցում, վարչութիւնս մեծայոյս է, որ բարեպաշտ ազգայինք չպիտի խնայեն իրենց լուման՝ մի բազմամեայ և բազմավաստակ հայ ուսուցչի որբացեալ ընտանեաց պէտքն ըստ արժանւոյն ապահովելու համար։

Տեսուչ Ճեմարանի՝ Կ. Կոստանեանց.

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ. ՄՈՍԿՈՒԱ.

Հանգուցեալ Պետական Խորհրդական ԴԱՆԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՄՐՑԱՆԱԿԻ ՆԻՒԹԸ.

«ՀԱՅԵՐԸ ԲԻՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ՝ ՄԻՆՉԵՒ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՒԱՆՔԸ» (մանաւանդ Բիւզանդական աղբիւրների հիմամբ)։

Շարադրութիւնը կարող է ներկայացուել Հայերէն, Ռուսերէն, Փրանսերէն կամ Գերմաներէն։

Շարադրութիւնը պէտք է ներկայացուի ոչ ուշ քան 1-ն Յունուարի 1898 թ.

Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդարանի կողմից եօթն հարիւր րուբլի մրցանակով։

Վերատեսուչ Ճեմարանի Գ. Քանանեան

Քարտուղար Խորհրդարանի Գ. Խալաթեան

10 Հոկտեմբերի, 1895 թ.
Մոսկուա.

„ՄՈՒՐՃ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ.

Տարեկան գինն է 10 ռ.

Հասցէն. Тифлис, Въ Редакцію журнала „МУРЧЪ"
Արտասահմանից. Tiflis. Rédaction be la Revue „MOURTCH"

ԺԵ. ՏԱՐԻ.

„ԱՂԲԻՒՐ"

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

3 ՊՐԷՄԻԱՆԵՐՈՎ.

Բաժանորդագինը 3 ր.

Ը. ՏԱՐԻ.

„ՏԱՐԱԶ"

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. 6 Ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ",—„ТАРАЗЪ".

Ժ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

„ԱՐԱՔՍ"

Վեցամսեայ.

Բաժանորդագինն է 3 րուբլի.

Իւրաքանչիւր գիրքը արժէ 2 րուբ. 50 կ.

Հասցէն՝ С. Петербургъ, Симеону Гуламирянцу.
St. Pétersbourg, Siméon Goulamiriantz.

## „ԱՐԱՐԱՏ"

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

### ԱՄՍԱԳԻՐ

Լ. ՏԱՐԻ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է (Ռուսաստանում 4 ռ.
(Արտասահմանում 5 ռ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 2 ½ դոլար։

«ԱՐԱՐԱՏԻ» Խմբագրութեան պէտք է գրել հետեւեալ հասցէով. Св. Эчміадзинъ, Типографическому Комитету.

## „ԼՈՒՄԱՅ"

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Բ. ՏԱՐԻ.

Լումայ հանդիսի բաժանորդագինն է 3 ռ., իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռ. Առաջին գիրքը լոյս կը տեսնի յունուարի 1-ին, երկրորդը՝ յուլիսի 1-ին։

Հասցէն՝ Тифлисъ, свящ. Гюту Аганьянцъ.

## „ՆՈՐ-ԴԱՐ"

Քաղաքական գրականական ամենօրեայ թերթը 1897-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն գիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիւրակի և տօներին հետեւող օրերից։

Տարուայ ընթացքում «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի առնուազն 220—255 համար

«Նոր-Դար»-ը ստանում է սեպհական հեռագրներ և ունի նշանաւոր կեդրոններում յատուկ թղթակիցներ։

«Նոր-Դարի»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը 6 րուբլի. Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.

ԵՒՐՈՊԱՅԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլար։

Խմբագրութեանը պէտք է գրել այս հասցէով. Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ" կամ Tiflis. Rédaction [illegible] „NOR-DAR".

## „ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ.
ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ . . . . . . 6 Ռ.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն. Тифлисъ, Редакція „АРДЗАГАНКЪ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal „ARDZAGANG".

Յայտարարութիւններ ընդունւում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԱՌԱՋԻԿԱՅ 1897 ԹՈՒԱԿԱՆԻՆ

25-րդ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ"** 25-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակուի Թիֆլիսում նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի է, վեցամսեանը 6 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի։

Ամերիկայի Բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար։

Եւրոպայի Բաժանորդները՝ տարեկան 30 ֆրանկ

«ՄՇԱԿԻ» Խմբագրութեան պէտք է դիմել հետեւեալ հասցէով. Тифлисъ, Редакція газеты „МШАКЪ". իսկ արտասահմանից՝ Tiflis Rédaction du journal „MSCHAK".

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ։

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ

ՓՈՔՐԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

## ՕՐԱՑՈՅՑ 1897 Թ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ.

**ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ 20 կոպ.**

Վաճառւում է Տփխիսում՝ «Կենդրոնական» եւ «Արարատ» գրավաճառանոցներում. Բագւում՝ պ. Շիրազեանցի գրավաճառանոցում. վիճակային կոնսիստորիաներում եւ հոգեւոր կառավարութիւններում: Մեծ քանակութեամբ գնողին 20% զիջում կըլինի. պէտք [illegible] Ս. Էջմիածնի տպարանական ժողովին այս հասցէով. СВ. Эчміадзинъ. Типографическому комитету.